Հավելված N 5
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 3-ի N 1332 - Ն որոշման

ԿԱՐԳ
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ

1. Լիազոր մարմինն օրենսգրքով սահմանված դեպքերում կասեցնում է ջրօգտագործման թույլտվությունը մինչև կասեցման հիմքի վերացումը:

2. Եթե ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման պահին առկա չէ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով նախատեսված դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացությունը, ապա ջրօգտագործման թույլտվությունը կասեցվում է մինչև շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացության առկայությունը:

3. Սահմանված ժամկետում ջրօգտագործողի կամ նրա լիազորած անձի կողմից ջրօգտագործման թույլտվության իր օրինակը չներկայացվելու դեպքում այն կասեցվում է մինչև ջրօգտագործման թույլտվության իր օրինակը ներկայացնելը:

4. Լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով լիազոր մարմինը գրավոր հրավիրում է ջրօգտագործողին՝ կասեցման հիմքերը ներկայացնելու համար: Ջրօգտագործողի լսված լինելու իրավունքի իրացումն արձանագրվում է:

5. Ջրօգտագործման թույլտվությունը կասեցվում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, ինչի մեջ հստակ նշվում է կասեցման պատճառներն ու իրավական հիմքերը, ինչպես նաև կասեցման վերացման համար պահանջվող գործողություններն ու օրենսգրքով սահմանված ժամկետը: Ջրօգտագործման թույլտվության կասեցման մասին լիազոր մարմինը պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին կասեցման մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Ջրօգտագործման թույլտվության կասեցման մասին հրամանը լիազոր մարմինը 5 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է ջրային պետական կադաստրում՝ փոխելով գրանցված ջրօգտագործման թույլտվության կարգավիճակը:

7. Լիազոր մարմինը, կասեցման հիմքի վերացման մասին հավաստիանալու դեպքում, կասեցման վերացման վերաբերյալ լիազոր մարմնի ղեկավարի հրամանի մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին՝ ջրային պետական կադաստրում փոփոխելով գրանցված ջրօգտագործման թույլտվության կարգավիճակը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ